

Նաեւ Առաջնորդ Ջմիւռնիոյ. կը յիշուի աւելի մանրամասն Պոլսոյ Հայոց 1706ին առ Աղեքս. Կթողկս. գրած նշանաւոր մասնաւորական թուղթին մէջ, ընդդէմ կաթողիկեայց, Կոռունկ, 1863) որ եռանդուն կաթողիկէ էր եւ պաշտպան կաթողիկէ հաւատոց, զոր կաթողիկոսը պիտի զրկէր իր կողմանէ Հռոմ՝ եթէ իր մահն չարգելուր, Պոլիս եկաւ կաթողիկոսի կողմանէ, եւ կաթողիկէ հաւատքը քարոզեց եւ ինծի մեծապէս նպաստեց: Կաթողիկէ մեծամեծք, որպէս զի յիշեալ տրտունջը դադրի, աղաչեցին Յովսէփ կաթողիկէ Արքեպիսկոպոսին՝ որ արդէն ունէր ծայրագոյն վարդապետութիւն, որպէս զի ինծի վարդապետութեան աստիճան տայ, զոր սիրով յանձն առաւ եւ Առաքելական Նուիրակն Gasparus Gaspari ամենայն սիրով հաւանեցաւ, հրապարակաւ տուաւ ինձ Յովս. Արքեպիսկոպոս, — ի Սամաթիա՝ Ս. Գէորգ եկեղեցւոյն մէջ, ինչպէս կը գրէ վերոյիշեալ մասնաւորական թուղթը, հակառակ ազդարարութեան Հայոց ոմանց առ նոյն Արքեպիսկոպոսն, որ “նզովեաց զամենայն հերձուածան յանուանէ, եւ ոչ զՔաղկեդոն եւ ոչ զԼեւոն”:

Նոյն նիւթին վրայ Աննետիկէն 21 Փետր. 1728 թուականաւ լատիներէն կը գրեն հետեւեալներն, իրենց ինքնագիր ստորագրութիւնը դնելով հայերէն եւ դիմաց լատիներէն. “Անաստաս Յարութիւն Լէօնեան արքի Եպս. չէսարի փալէստինոյ, Պաղտասար վարդապետ Արրահամեան, տիգրանակերտացի, Անտոն վար-